

օտար ♦♦♦ գիր

Միգրել դե Ունամունո

արել սանչես
կամ մի տառապանքի
պատմություն



Անտարես
Երևան

Miguel de Unamuno
Abel Sánchez: Una Historia de Pasión

Իսպաներենից թարգմանեց
ՌՌԻԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Դե Ունամունո Միգել

Աբել Սանչես կամ մի տառապանքի պատմություն:
Վեպ/Միգել դե Ունամունո.– թարգմ.՝ Ռուզաննա
Պետրոսյան: Եր.: Անտարես, 2022.– 244 էջ:

«Աբել Սանչես կամ մի տառապանքի պատմություն» խոստովանական վեպը երկու ընկերների՝ Խոակին Մոնեգրոյի և Աբել Սանչեսի ողբերգական պատմությունն է, որը կարելի է ընթերցել իբրև աստվածաշնչյան Աբելի և Կայենի մեկ այլ տարբերակ, որի միջոցով Ունամունոն փորձում է ներթափանցել իսպանացիներին հատուկ պատմական երկու արատների՝ նախանձի և ցինիզմի խորխորատները: Խոակինն անհաղթահարելի նախանձ է զգում Աբելի նկատմամբ, հատկապես երբ վերջինս ամուսնանում է Էլենայի՝ Խոակինի սիրած աղջկա հետ: Այդ պահից սկսած Խոակինի ցանկացած փորձ՝ մոռանալու կամ գերազանցելու ընկերոջը, դատապարտված է, ուստի նա իր կյանքը նվիրում է քայքայող տառապանքին, որն ավարտվում է սկզբում Աբելի, հետո նաև՝ Խոակինի մահով:

ISBN 978-9939-76-922-6



Անտարես

© «Անտարես», 2022

Խոսկին Մոնեգրոյի մահից հետո հանգուցյալի թղթերում գտնվել են ամբողջ կյանքում նրան կեղեքած մութ տառապանքի մասին պատառիկներ: Ընթերցողին ներկայացվող միջանկյալ հատվածները վերցված են նրա՝ անձնական վշտի մասին կատարած հեղինակային մեկնաբանություն-գրառումներից, որոնք հեղինակը ներկայացրել է «Խոստովանություն» վերնագրով:

Վերը նշված հատվածները չակերտների մեջ են: «Խոստովանությունը» հասցեագրված է հանգուցյալի դստերը:

ՆԱԽԱԲԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Անդրադառնալով իմ «Արել Սանչես կամ մի փառապանքի պատմություն» գրքի երկրորդ հրատարակությանը՝ թերևս ճիշտ կլիներ այն անվանել «Մի փառապանքի պատմություն», հատկապես հիմա, երբ ինձ վտարել են իմ ներսում ցավող Իսպանիայից, երբ ես վերապրում եմ հայրենասիրական այն բոլոր վշտերը, որոնցից ցանկանում էի ազատվել՝ գրելով այս սրտաճմլիկ պատմությունը: Պատմություն, որը չէի ցանկանա վերընթերցել:

Այս վեպի առաջին հրատարակությունն Իսպանիայում ի սկզբանե հաջողություն չունեցավ: Պատճառը, անշուշտ, այն մռայլ և սգո այլաբանական բովանդակությունն էր, որն ինքս էի ձգտում պատկերել և արտահայտել, մինչդեռ պատումն ինքնին արդեն մռայլ էր:

Հասարակությունը չի սիրում, երբ նշտարը ձեռքիդ հասնում ես մարդկային հոգու գարշահոտ խորխորատներին և դուրս թափում ներսի թարախը:

Այնուհանդերձ, իտալերեն, գերմաներեն և հոլանդերեն թարգմանված այս վեպը մեծ հաջողություն ունեցավ այն երկրներում, որտեղ մարդիկ մտածում և զգում են այդ լեզուներով: Ապա հաջողություն ունեցավ նաև մեր լեզվով՝ իսպաներենով: Հատկապես այն բանից հետո, երբ երիտասարդ քննադատ Խոսե Ա. Բալսեյրոն իր «Դիտարանի» II հատորում սուր էսսե նվիրեց դրան: Այնպես որ, այս երկրորդ հրատարակությունը լիովին տեղին է:

Հյուսիսամերիկացի մի երիտասարդ, որը դոկտորական թեզ է գրում իմ գրական ստեղծագործության մասին, վերջերս գրել էր ինձ՝ հարցնելու, թե արդյոք իմ այս պատմությունը ես վերցրել եմ Լորդ Բայրոնի «Կայենից», ստիպված էի պատասխանել, որ իմ վիպական կամ նիվոլային հերոսներին ես չեմ վերցնում գրքերից, այլ կյանքից, որը զգում և տառապում եմ,

վայելում եմ այն ամենը, ինչ կա իմ ներսում և իմ կյանքում: Հեղինակի ստեղծած բոլոր կերպարները, եթե վերջինս նրանց ողջ է ստեղծում, բանաստեղծի կերտած բոլոր հերոսները, նույնիսկ ամենահակասականները, իրենց ստեղծող հեղինակի բնական և օրինական զավակներն են (երջանիկ են այդպիսի հեղինակները), նրա մասնիկներն են:

Իր փոթորկահույզ կյանքի վերջում՝ մահվան շեմին, իմ խեղճ Խոակին Մինեգրոն ասում էր. «Ինչո՞ւ ծնվեցի ատելության երկրում: Այն երկրում, որտեղ պատվիրանն ասում է. «Ատիր մեծավորիդ, ինչպես ինքդ քեզ»: Քանզի ես ապրել եմ՝ ատելով ինքս ինձ, քանզի այստեղ բոլորն ապրում են իրար ատելով: Բայց... այստեղ բերեք երեխային», և լսելով այդ խոսքերը իմ Խոակինից արդեն երկրորդ անգամ և այդքան տարի հետո, այն էլ ինչպիսի՞ տարիներ, այս երկու հրատարակություններն իրարից բաժանող տարիներ, ես զգացի իսպանական ազգային բորոտության տենդի ամբողջ սարսափը և ինքս ինձ ասացի. «Բայց... բերեք երեխային»: Քանզի այստեղ՝ իմ

հայրենի բասկյան հողում (ֆրանսիական թե իսպանական՝ կարևոր չէ), ուր վերադարձել եմ լքումի երեսունչորս տարին բոլորելուց հետո, վերապրում եմ իմ մանկությունը:

Թերևս երեք ամիս առաջ էր, որ այստեղ գրեցի.

*Եթե կարողանայիր պոկել ինձ ճանապարհից
և դարձնել ինձ այնպիսին, ինչպիսին եղել եմ,
եթե կարողանայի փալ քեզ, Տեր իմ,
այն, ինչ դրեցիր իմ մեջ, երբ երեխա էի...*

Ավաղ, որքան ողբերգական է իսպանական կյանքից ունեցած իմ փորձը: Սալվադոր դե Մադարիագան, համեմատելով անգլիացիներին, ֆրանսիացիներին և իսպանացիներին, ասում է, որ հիմնական արատների բաշխման մեջ, որ բոլորս ունենք, անգլիացիներին ավելի շատ է կեղծավորություն բաժին հասել, քան մյուս երկուսին, ֆրանսիացիներին՝ ավելի շատ ազահություն, իսպանացիներին՝ ավելի շատ նախանձ: Եվ հույների այդ սարսափելի նախանձը,

phthonos, ժողովրդավար, ավելի ճիշտ՝ դեմագոգիկ ժողովուրդը, ինչպիսին իսպանացիներն են, եղել է իսպանական հասարակական կյանքի հումքը: Կևեդոն դա թերևս բոլորից լավ գիտեր, նաև Ֆրեյ Լուիս դե Լեոնը: Ֆելիպե II-ի ամբարտավանությունը գուցե ոչ այլ ինչ էր, քան նախանձ: «Նախանձը ծնվել է Կատալոնիայում»,– մի անգամ Սալամանկայի Պլասա Մայորում ինձ ասաց Կամբոն: Ինչո՞ւ ոչ Իսպանիայում: Չեզոքների և իրենց տների՝ այրերի՝ քաղաքական գործիչների դեմ ամբողջ գարշահոտ թշնամին միթե նախանձը չէ: Որտեղի՞ց է ծնվել այսօր վերածնված հին ինկվիզիցիան:

Եվ վերջապես այն նախանձը, որը փորձեցի ցույց տալ իմ Խոակին Մոնեգրոյի հոգում, ողբերգական նախանձն է, ինքնապաշտպանվող նախանձը, նախանձ, որը կարելի է հրեշտակային անվանել, բայց ինչ կարելի է ասել մեր ժողովրդի ամենաանպաշտպան հոգին խժռող այդ կեղծավոր, թաքնված, ստոր նախանձի մասին, հավաքական նախանձի, հանդիսականի նախանձի մասին, որը գնում է թատրոն՝

Ճափահարելու ավելի նուրբ կամ խոր ծաղրանքին:

Ողբերգական (թերևս ամենաողբերգական) տառապանքի մասին իմ այս պատմության երկու հրատարակությունները բաժանող տարիների ընթացքում ես զգացել եմ ազգային բորոտության տենդը և մոտ հինգ տարվա ընթացքում, երբ ստիպված էի ապրել իմ Իսպանիայից դուրս, զգացել եմ, թե ինչպես հին ավանդական (ավանդապաշտ) իսպանական նախանձը, այն մաքուր նախանձը, որն ի դերև ելավ Կևեդոյի և Լարայի շնորհիվ, կամաց-կամաց վերաճեց քաղաքական կուսակցության պես մի բանի, ամոթալի, կեղծավոր, քայքայող մի բանի, ես տեսել եմ, թե ինչպես է նախանձը պաշտպանական խունտաներ ստեղծել, տեսել եմ, թե ինչպես է այն դուրս եկել բարձրյալ բնության դեմ, և հիմա առաջին անգամ վերընթերցում եմ իմ «Արել Սանչեսին», որպեսզի վերանայեմ երկրորդ հրատարակության դրույթները (հուսով եմ՝ ոչ վերջինը), մի հրատարակություն, որում զգացել եմ իմ Խոակին Մոնտեգրոյի

տառապանքի մեծությունը, և թե բարոյապես որքան բարձր է նա բոլոր Աբելների մեջ: Վատը Կայենը չէ, այլ Կայենին երկրպագողները և Աբելին երկրպագողները:

Բայց քանզի չեմ ուզում խորամուխ լինել հին վշտերի մեջ, հին վարչակարգի վշտերի մեջ (ոչ պակաս տխուր, քան, այսպես կոչված, նորը), ավարտում եմ աքսորում գրված այս նախաբանը՝ աչքիս առաջ պահելով իմ Իսպանիան, իմ խեղճ Խոսակին Մինեգրոյի շուրթերից հնչեցնելով հետևյալը. «Բայց... բերեք երեխային»:

ՄԻԳԵԼ ԴԵ ՈՒՆԱՄՈՒՆՈ

Անդայ, հուլիսի 14, 1928 թվական

I

Աբել Սանչեսն ու Խոակին Մոնեգրոն չէին հիշում, թե երբ էին ծանոթացել: Իրար վաղ հասակից գիտեին՝ համարյա օրորոցից, քանզի նրանց երկու ծծմայրերը հավաքվելիս տղաներին պառկեցնում էին իրար կողքի դեռ այն ժամանակ, երբ խոսել չգիտեին: Եվ կամաց-կամաց ճանաչեցին իրար: Այդպիսով մանուկ հասակից միասին մեծացան և ընկերացան՝ դառնալով մի կուրծք կերած եղբայրներ: Իրենց զբոսանքների, խաղերի և ընդհանուր ընկերների մեջ Խոակինն ավելի տիրական, նախաձեռնող և կամային էր թվում, մինչդեռ Աբելը միշտ զիջում էր, նույնիսկ այն, ինչ իրենն էր: Նրա համար ավելի լավ էր հնազանդվել, քան հրամայել: Համարյա երբեք չէին վիճում: «Ինձ մի նայիր, արա՛ ինչ ուզում ես...»,– ասում էր Աբելը Խոակինին, և այդ «արա՛ ինչ ուզում ես» կրկնվող արտահայտությունը կանխում էր հնարավոր վեճերը:

– Ինչո՞ւ երբեք չես ասում՝ ոչ,– բացականչում էր Խոակիհնը:

– Բայց ինչո՞ւ,– պատասխանում էր մյուսը:

– Լավ, բայց Աբելը չի ուզում անտառ գնանք,– մի անգամ ասաց Խոակիհնը, երբ մի խումբ տղա-ներով ուզում էին զբոսանքի դուրս գալ:

– Ես, բայց ինչի՞ չեմ ուզում...– բացականչեց Աբելը:– Եթե ուզում ես, ընկերս, գնանք:

– Ոչ, դա ի՞նչ կապ ունի իմ ուզել-չուզելու հետ: Քանի անգամ եմ ասել, որ էդպես չասես: Հերիք է ասես՝ դու ո՞նց կուզես: Ասա, որ չես ուզում գնալ:

– Բայց ուզում եմ, ընկերս...

– Ուրեմն ես չեմ գա...

– Ես էլ չեմ գա:

– Չեղավ,– բղավեց Խոակիհնը:– Ով ուզում է՝ թող գնանրա հետ, ով ուզում է՝ թող մնա ինձ հետ:

Եվ բոլորը գնացին Աբելի հետ՝ մենակ թող-նելով Խոակիհնին:

Մանկության այդ դրվագը հիշատակելով իր «Խոսարովանությունում»՝ Խոակիհնը գրում է. «Դեռ այն ժամանակ բոլորը համակրում էին

Աբելին, իսկ ինձ՝ ոչ, այդպես էլ չհասկացա, թե ինչու էին ինձ մենակ թողնում: Մանուկ հասակից ընկերներս խուսափում էին ինձնից»:

Ինստիտուտում միասին սովորելու տարիներին Խոակինն աչքի էր ընկնում աշխատասիրությանը, ձգտում էր մրցանակների, գովասանքի, ձգտում էր առաջինը լինել, մինչդեռ Աբելն էր առաջինը՝ թե՛ դասարանում, թե՛ ինստիտուտի բակում, թե՛ փողոցում, թե՛ դաշտում, թե՛ ցլամարտում, թե՛ ընկերական շրջապատում: Աբելն իր սրամիտ կատակներով ծիծաղեցնում էր ընկերներին, բայց հատկապես հաջողված էին դասախոսների՝ նրա արած ծաղրանկարները: «Խոակինն ավելի աշխատասեր է, իսկ Աբելը՝ ավելի ընդունակ... Եթե սովորեր...»: Ընկերների այդ համընդհանուր միտքը, որին քաջատեղյակ էր Խոակինը, թույնով լցրեց նրա սիրտը: Նույնիսկ գայթակղվեց ուսումը թողնելու և մի ուրիշ բնագավառում նրա հետ մրցակցելու մտքով, և ինքն իրեն ասաց՝ «Պահ, նրանք ինչ գիտեն, որ...», և շարունակեց հավատարիմ մնալ իրեն բնատուր տրված հակմանը: Բայց որքան էլ

փորձում էր խելքով և շնորհքով գերազանցել իր մրցակցին, չէր ստացվում: Նրա կատակները ծիծաղելի չէին, և նրան համարում էին ահավոր մռայլ մարդ: «Սգամածի մեկն ես,- հաճախ կրկնում էր Ֆեդերիկո Կուադրադոն,- կատակներդ կարծես մենամարտից վերցված լինեն»:

Երկուսն էլ ավարտեցին ինստիտուտը: Աբելն ընտրեց արվեստագետի մասնագիտությունը՝ նվիրվելով գեղանկարչությանը, իսկ Խոակինն ընդունվեց բժշկական ֆակուլտետ: Հաճախ հանդիպում էին, մեկը մյուսին պատմում իրենց ուսումնական հաջողությունների մասին, Խոակինը համոզում էր Աբելին, որ բժշկությունը նույնպես արվեստ է, նույնիսկ՝ գեղարվեստ, և պահանջում է բանաստեղծական ոգեշնչում: Մի ուրիշ անգամ, հակառակը, ստորադասում էր գեղարվեստը՝ իբրև միտքը աղավաղող մի բան՝ փառաբանելով գիտությունը, որը բարձրացնում, ամրացնում և ազնվացնում է մարդկային ոգին ճշմարտությամբ:

– Բայց չէ՞ որ բժշկությունը նույնպես կասկածելի գիտություն է,- հակադարձում էր

Աբելը:– Ավելի ճիշտ՝ արվեստ, գիտությունը գործնականում կիրառելու արվեստ:

– Բայց ես մտադիր չեմ հիվանդներին բուժել,– պատասխանում էր Խոակինը:

– Բայց ախր դա այնքան ազնիվ և օգտակար զբաղմունք է,– ավելացնում էր Աբելը:

– Այո, բայց ոչ ինձ համար: Թող քո ասած ամենաազնիվն ու օգտակարը լինի, բայց ես ստում եմ թե՛ այդ ազնվությունը, թե՛ օգտակարությունը: Ոմանց համար գուցե զարկերակը զգալը, լեզուն զննելն ու դեղատոմս գրելը փող աշխատելու լավ միջոց է: Ես ավելին եմ ուզում...

– Ավելին:

– Այո, ուզում եմ նոր ճամփաներ բացել: Մտածում եմ գիտական հետազոտությանը զբաղվել: Բժշկության մեջ իսկական փառքը որևէ հիվանդության գաղտնիքը բացահայտողներինն է, ոչ թե այդ գաղտնիքը քիչ թե շատ հաջողությամբ կյանքի կոչողներինը:

– Սիրում եմ իդեալիստ տեսակդ:

– Բա ի՞նչ, մտածում էիր՝ փառքի մասին միայն դուք՝ արվեստագետ-նկարիչներդ եք երազում:

ՄԻԳԵԼ ԴԵ ՈՒՆԱՄՈՒՆՈ

– Ըսկերս, ղվ է քեզ ասել, որ ես երագում եմ փառքի մասին...

– Ո՞չ, էդ դեպքում ինչո՞ւ սկսեցիր զբաղվել գեղանկարչությամբ:

– Որովհետև եթե հաջողեմ այդ գործի մեջ, դա ինձ կտա...

– Ի՞նչ:

– Դե, փող:

– Հեքիաթների ուրիշին պատմիր, Աբել: Ես քեզ ծնված օրից գիտեմ: Ինձ չես խաբի: Ես ճանաչում եմ քեզ:

– Ես երբևէ խաբե՞լ եմ քեզ:

– Ոչ, բայց կարող ես անգիտակցաբար խաբել: Չէ՞ որ դու միայն ձևացնում ես, որ քեզ ոչինչ պետք չէ, որ կյանքը քեզ համար խաղ է, որ թքած ունես ամեն ինչի վրա, մինչդեռ իրականում հավակնոտի մեկն ես...

– Ես հավակնոտ եմ:

– Այո: Հավակնում ես փառքի, հաջողության և ճանաչումի հասնել... Միշտ ես էդպիսին եղել, դեռ մանկուց: Միայն թե թաքուն:

– Լսիր, Խոակին, ասա ինձ, ես երբևէ վիճարկե՞լ եմ մրցանակներդ, միթե դու չես միշտ առաջին և խոստումնալից տղան եղել:

– Ճիշտ է, բայց բոլորի աչքի լույսը դու ես եղել, ոչ թե ես...

– Բայց ի՞նչ կարող էի անել...

– Ուզում ես հավատամ, որ ճանաչման չե՞ս ձգտել...

– Այդ դու ես դրան ձգտել...

– Ես, էս: Մեղա քեզ:

– Լավ, արի վերջ տանք էս հիմար խոսակցությանը, մոռացիր: Ավելի լավ կլինի՝ հարսնացուիդ մասին պատմիր:

– Հարսնացուի՞:

– Դե հա, զարմուհուդ մասին, որին ուզում ես հարսնացուդ դարձնել:

Խոակինը, ցանկանալով տիրանալ Էլենայի սրտին, իր սիրային նկրտումների մեջ դրեց իր նպատակասլաց և վարանող ոգու ամբողջ ջանքը: Եվ իր սիրային պայքարի անխուսափելի զեղումները կիսում էր իր ընկեր Աբելի հետ: Իսկ Էլենան ստիպում էր նրան տառապել:

– Ես գնալով չեմ հասկանում նրան,– ասում էր Աբելին:– Այդ աղջիկն ինձ համար սֆինքս է...

– Գիտե՞ս՝ Օսկար Ուայլդն ինչ էր ասում այդ առիթով. ցանկացած կին սֆինքս է առանց գաղտնիքի:

– Բայց էլենան կարծես գաղտնիք ունի: Երևի թաքուն սիրում է ուրիշին, թեև չգիտեմ՝ ում: Համոզված եմ, որ սիրում է ուրիշին:

– Ինչո՞ւ:

– Ուրիշ կերպ չեմ կարող բացատրել նրա վերաբերմունքն իմ հանդեպ...

– Այսինքն՝ միայն այն պատճառով, որ չի ուզում սիրել քեզ... որպես փեսացուի կամ որպես զարմիկի, եթե կուզես:

– Մի ծաղրիր:

– Բայց իսկապես, միայն այն պատճառով, որ նա չի ուզում քեզ սիրել որպես փեսացուի, ավելի ձիշտ՝ որպես ամուսնու, նշանակում է սիրահարված է ուրիշին: Այ քեզ տրամաբանություն:

– Գիտեմ ինչ եմ ասում:

– Ես էլ:

– Դո՞ւ:

– Իհարկե: Մի ձևացրու, թե չգիտես, որ ինձ-
նից լավ ոչ ոք չի ճանաչում քեզ: Ուրեմն էլ ինչ
կա զարմանալու, եթե գիտեմ, որ ես էլ քեզ եմ
լավ ճանաչում: Մենք իրար էնքան վաղուց գի-
տենք:

– Ես քեզ ասում եմ, որ այդ կինը գժվեցնում
է ինձ, փորձում համբերությունս: Խաղում է ինձ
հետ: Լավ կլիներ, եթե հենց սկզբից չէ ասեր,
բայց ինձ պահել անորոշության մեջ՝ ասելով,
որ դեռ կտեսնի, կմտածի... մտածելու ինչ կա...
Սեթևեթում է:

– Գուցե ուսումնասիրում է քեզ:

– Ուսումնասիրում: Նա՛: Ուրիշ բան, որ ես
ուսումնասիրեի: Նա ինչ կարող է ուսումնա-
սիրել:

– Խոսակին, Խոսակին, ինչո՞ւ ես քեզ ու նրան
էդքան ցածրացնում... Թե՛ կարծում ես, որ աղ-
ջիկը բավական է նայի, լսի քեզ, իմանա, որ
սիրում ես իրեն, անմիջապես պիտի տրվի
քեզ:

– Ես գիտեմ, որ միշտ տհաճ եմ եղել...

– Դե, ընկերս, էդպիսի բան մի ասա...

– Բանն այն է, որ էդ կինը պարզապես խաղում է ինձ հետ: Իմ պես անկեղծ, ժշմարիտ և բաց մարդու հետ խաղալը պատիվ չի բերում... Բայց միայն տեսնես՝ ինչ գեղեցիկ է: Եվ որքան սառն ու արհամարհական է, այնքան ավելի գեղեցիկ է դառնում: Երբեմն չեմ հասկանում՝ ավելի շատ սիրում եմ նրան, թե՛ ատում... Կուզե՞ս քեզ ծանոթացնեմ նրա հետ:

- Իհարկե, եթե միայն...
- Լավ, ձեզ կծանոթացնեմ:
- Եվ եթե նա ուզում է...
- Ինչ:
- Ես կդիմանկարեմ նրան:
- Իհարկե, ընկերս:

Եվս մեկ գիշեր Խոակինը լավ չքնեց՝ մտածելով, որ այլոց ուշադրությունից և սիրուց փչացած Աբել Սանչեսն այնքան հմայիչ էր: Ինչ էր լինելու: Գուցե էլենան էլ, ինչպես Խոակինի ընկերներից շատերը, Աբելին էր նախընտրելու: Մտածեց հրաժարվել ծանոթացնելու մտքից, բայց քանի որ արդեն խոստացել էր...

ՄԻԳԵԼ ԴԵ ՈՒՆԱՄՈՒՆՈ
ԱԲԵԼ ՍԱՆՉԵՍ ԿԱՄ
ՄԻ ՏԱՌԱՊԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

MIGUEL DE UNAMUNO
ABEL SÁNCHEZ: UNA HISTORIA DE PASIÓN

Թարգմանիչ՝ Ռուզաննա Պետրոսյան
Խմբագիր՝ Արքմենիկ Նիկողոսյան

Հրատ. բաժնի ղեկավար՝ Հռիփսիմե Մադոյան
Տեխն. խմբագիր՝ Արարատ Թովմասյան
Սրբագրիչ՝ Մելանյա Նահապետյան
Էջադրող՝ Նարինե Հովհաննիսյան
Շապիկը՝ Սարգիս Անտոնյանի
Կազմի ձևավորումը՝ Հասմիկ Թորոսյանի



Անտարես

«Անտարես» հրատարակչատուն
ՀՀ, Երևան-0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 58 76 69
antares@antares.am
www.antares.am